Закрытое акционерное общество
«Газпром Армения»
(ЗАО «Газпром Армения»)

ЗАМЕСТИТЕЛЬ
ГЕНЕРАЛЬНОГО ДИРЕКТОРА
ГЛАВНЫЙ ИНЖЕНЕР

Тбилисское шоссе, 43, Ереван, Республика Армения, 0091
тел.: (374 10) 294-888, 294-753, факс: (374 10) 294-728
e-mail: inbox@gazpromarmenia.am, gazpromarmenia.am

«Գազպրոմ Արմենիա»
փակ բաժնետիրական ընկերություն
(«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ)

ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆԻ
ՏԵՂԱԿԱԼ
ԳԼԽԱՎՈՐ ՃԱՐՏԱՐԱԳԵՏ

0091, ՀՀ, Երևան, Թբիլիսյան խճուղի 43
հեռ.՝ (374 10) 294-888, 294-753, ֆաքս՝ (374 10) 294-728
էլ.փոստ՝ inbox@gazpromarmenia.am, gazpromarmenia.am

«18» 11 2022 г. № 02/29/3542-2022

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ
ԴԱՏԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ
ՊԱՐՈՆ ՆԱԻՐԻ ԳԱԼՍՏՅԱՆԻՆ

ՊԱՏՃԵՆԸ՝ «ԳԱԶՊՐՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ
ԵՐԵՎԱՆԻ ԳԳՄ-Ի ՏՆՕՐԵՆ
ՊԱՐՈՆ ՎԱՉԳԵՆ ԱՐՏԱՇԵՍՅԱՆԻՆ

Ձեր 03.11.2022թ. ԴԴ-1 Ե-9103
գրության վերաբերյալ

Հարգելի պարոն Գալստյան

Ի լրումն «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ Երևանի ԳԳՄ-ի 20.10.2022թ. №22-13/3873 գրության, համաձայն ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2005թ. հուլիսի 8-ի №95-Ն որոշմամբ հաստատված «Բնական գազի մատակարարման և օգտագործման կանոններ»-ի 10-րդ գլխի 10.6 կետի և Հավելված 1-ի, նոր գազասպառման համակարգը գազամատակարարման ցանցին միացնելու համար գազամատակարարման ցանցի ընդլայնման աշխատանքների իրականացման նպատակով, Ձեր համաձայնեցմանն է ներկայացվում քաղաք Երևան, Աջափնյակ վարչական շրջանի Գ. Բաշինջաղյան փողոց թիվ 100 հասցեում գտնվող Բարձրագույն Դատական խոչիրդի աշխատակազմի Դատական դեպարտամենտին պատկանող վարչական շենքի գազամատակարարման նախահաշիվը և միակողմանի լրացված միացման պայմանագիրը:

Խնդրում եմ մեկ ամսյա ժամկետում ներկայացնել Ձեր դիրքորոշումը:

Առդիր՝ նախահաշիվը – 2 թերթից,
պայմանագիրը՝ 2 օրինակ - 6 թերթից:

Հարգանքով,

Ա. Հակոբյան

Վ. Մարգարյան
(010)294726

ՄՈՒՏՔ ՊՄ
ՄԱԺԻՆ
18435

Ամփոփ նախահաշվային հաշվարկի ընդհանուր գումար՝ 1,118.85 հազ. դրամ

Այդ թվում վերադարձվող գումար՝ 76.87 հազ. դրամ

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՐԺԵՔԻ ԱՄՓՈՓ ՆԱԽԱՀԱՇՎԱՅԻՆ ՀԱՇՎԱՐԿ

Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի Գ.Բաշինջաղյան փողոցի № 100 հասցեյում գտնվող դատական դեպարտամենտին պատկանող վարչական շենքի գազամատակարարում

(կառույցի անվանումը)

№№ նախահաշվի և հաշվարկի համարը	Կառույցի, մասերի, աշխատանքների և ծախսերի անվանումը	Նախահաշվային արժեքը (հազ. դրամ)				
		Շինմոնտաժային աշխատանքներ	*Այդ թվում նյութա-տեխնիկական ռեսուրսները*	Սարքավորում	Այլ ծախսեր	Ընդամենը նախահաշվային արժեք (հազ. դրամ)
2	3	4	5	6	7	8
	Գլուխ 2. Շինարարության հիմնական օբյեկտներ					
ԼՆ 1	Գազամատակարարում	359.06	189.07	507.08		866.14
	Ընդամենը գլուխ 2:	359.06	189.07	507.08		866.14
	ԸՆԴԱՄԵՆԸ ԳԼՈՒԽՆԵՐ 1-7:	359.06	189.07	507.08		866.14
	Գլուխ 8. Ժամանակավոր կառույցներ և շինություններ					
1.5%	Ժամանակավոր կառույցներ և շինություններ	5.39	2.84	507.08		512.47
	Ընդամենը գլուխ 8:	5.39	2.84	507.08		512.47
	ԸՆԴԱՄԵՆԸ ԳԼՈՒԽՆԵՐ 1-8:	364.44	191.90	507.08		871.53
	Գլուխ 9. Այլ աշխատանքներ և ծախսեր					
0.70%	Ջմեռային թանկացումներ	2.55	1.34			2.55
	Ընդամենը	367.00	1.34			367.00
	ԸՆԴԱՄԵՆԸ ԳԼՈՒԽՆԵՐ 1-9:	367.00	193.25	507.08		874.08

№№ Նախահաշվի և հաշվարկի համարը	Կառույցի, մասերի, աշխատանքների և ծախսերի անվանումը	Նախահաշվային արժեքը (հազ. դրամ)				
		Շինմոնտաժային աշխատանքներ	*Այդ թվում նյութա-տեխնիկական ռեսուրսները*	Սարքավորում	Այլ ծախսեր	Ընդամենը նախահաշվային արժեք (հազ. դրամ)
2	3	4	5	6	7	8
	Գլուխ 10. Տեխնիկական և հեղինակային հսկողություն ծախսեր					
2.0%	Տեխնիկական հսկողություն				7.34	7.34
0.6%	Հեղինակային հսկողություն				2.20	2.20
	Ընդամենը գլուխ 10:				9.54	9.54
	ԸՆԴԱՄԵՆԸ ԳԼՈՒԽՆԵՐ 1-10:	367.00	193.25	507.08	9.54	883.62
	Չնախատեսնված աշխատանքների ծախսեր					
3%	Չնախատեսնված աշխատանքներ և ծախսեր	11.01	5.80	15.21	0.29	26.51
	ԸՆԴԱՄԵՆԸ:	378.01	199.04	522.30	9.83	910.13
20%	ԱԱՀ	**75.60**	39.81	104.46	**1.97**	**182.03**
	Ընդամենը ներառյալ ԱԱՀ	**453.61**	238.85	626.76	**11.79**	**1,092.16**
	Գլուխ 12. Նախագծանախահաշվային աշխատանքների և փորձաքննության ծախսեր					
6.5%	Նախագծանախահաշվային աշխատանքներին ծախսեր				23.3	23.34
	ԱԱՀ					0.00
12%	Պարտադիր փորձաքննության ծախսեր ներառյալ ԱԱՀ				3.36	3.36
	Ընդամենը գլուխ 12:				26.70	26.70
	ԸՆԴԱՄԵՆԸ ԱՄՓՈՓ ՆԱԽԱՀԱՇՎՈՎ:	**453.61**	*238.85*	*626.76*	**38.49**	**1,118.85**

Կազմեց՝ _____ Ս. Հակոբյան

Ստուգեց՝ _____ Կ. Բարսեղյան

100% 118850

80% 89-080

Հավելված N 1
ՀՀ հանրային ծառայությունները
կարգավորող հանձնաժողովի
2005 թվականի հուլիսի 8-ի N 95-Ն
որոշմամբ հաստատված բնական
գազի մատակարարման և
օգտագործման կանոնների

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N 1

ՆՈՐ ԲԱԺԱՆՈՐԴԻ ԿԱՄ ԲԱԺԱՆՈՐԴԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՎՈՂ ԳԱԶԱՍՊԱՌՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ԳԱԶԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՑԱՆՑԻՆ ՄԻԱՑՄԱՆ

ՀՀ, ք. Երևան «25» 11 2022 թվական
(կնքման վայրը)

Նոր բաժանորդը կամ կառուցապատողը, կամ գազասպառման համակարգը վերակառուցող բաժանորդը (այսուհետ՝ Պատվիրատու),

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ
ԴԱՏԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԱՆՏԻ ՂԵԿԱՎԱՐ,
(անունը, ազգանունը, հայրանունը կամ կազմակերպության անվանումը)

ի դեմս ՆԱԻՐԻ ԳԱԼՍՏՅԱՆ, ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ,
(անունը, ազգանունը, պաշտոնը)

որը գործում է ԲԴԽ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԴԱՏԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԱՆՏԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ հիման վրա,
(գործունեությունը կարգավորող փաստաթղթի անվանումը)

մի կողմից, և Մատակարարը՝ «ԳԱԶՊՐՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ,
(կազմակերպության անվանումը)

(մասնաճյուղի անվանումը)

ի դեմս ԱՇՈՏ ՌՈԲԵՐՏԻ ՀԱԿՈԲՅԱՆ, ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆԻ ՏԵՂԱԿԱԼ-ԳԼԽԱՎՈՐ ՃԱՐՏԱՐԱԳԵՏ,
(անունը, ազգանունը, պաշտոնը)

որը գործում է «ԳԱԶՊՐՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ-Ի ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ հիման վրա,
(գործունեությունը կարգավորող փաստաթղթի անվանումը)

մյուս կողմից, համատեղ կոչվելով Կողմեր, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1. Սույն պայմանագրի համաձայն՝ մատակարարը Պատվիրատուի նոր գազասպառման համակարգը միացնում է գազամատակարարման ցանցին, իսկ Պատվիրատուն վճարում է միացման համար անհրաժեշտ աշխատանքներին համարժեք վճար, որը ձևակերպվում է որպես հետագայում սպառվելիք բնական գազի դիմաց կանխավճար և մարվում է սպառած բնական գազի արժեքից այն նվազեցնելու միջոցով՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2005 թվականի հուլիսի 8-ի «Բնական գազի մատակարարման և օգտագործման կանոնները հաստատելու մասին» N 95-Ն որոշման 1-ին կետով հաստատված բնական գազի մատակարարման և օգտագործման կանոնների (այսուհետ՝ ԳՄՕԿ) 11-րդ գլխով սահմանված կարգով:

2. ԿՈՂՄԵՐԻ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2. Մատակարարը պարտավոր է՝

1) Պատվիրատուի դիմումի հիման վրա, ելնելով գազամատակարարման ցանցի թողունակության առավելագույն օգտագործման հնարավորությունից ու գազամատակարարման հասանելիությունից, նրա գազասպառման համակարգը միացնել գազամատակարարման

ցանցին՝ ապահովելով դիմումում նշված տեխնիկական հարաչափերով գազամատակարարման և հաշվառման հնարավորությունը.

2) Ավարտել Պատվիրատուի գազասպառման համակարգի միացումը գազամատակարարման ցանցին և

Պատվիրատուին ներկայացնել գազամատակարարման պայմանագիր կնքելու առաջարկ

18. 10. 2022 թ.
(օրը, ամիսը, տարին)

3. Պատվիրատուն պարտավոր է՝

1) իր գազասպառման համակարգը գազամատակարարման ցանցին միացնելու համար վճարել կանխավճարը 895080 դրամ՝ սույն պայմանագրի 3-րդ գլխում սահմանված կարգով.

2) Մատակարարին գրավոր տեղեկացնել ցանկացած փոփոխության մասին, որը կարող է ազդեցություն ունենալ միացման կամ կանխավճարի վճարման ժամկետի վրա.

3) բազմաբնակարան շենքում չգտնվող կազմակերպությունների դեպքում գազասպառման համակարգի շինհավաքակցման աշխատանքները սահմանված կարգով ավարտել սույն պայմանագրի 2-րդ կետի 2-րդ ենթակետում նշված ժամկետից 5 օր առաջ:

3. ԿԱՆԽԱՎՃԱՐԻ ՄԵԾՈՒԹՅՈՒՆԸ, ՎՃԱՐՄԱՆ ԵՎ ՄԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

4. Պատվիրատուի գազասպառման համակարգը գազամատակարարման ցանցին միացնելու համար անհրաժեշտ աշխատանքների արժեքը որոշվում է Մատակարարի կողմից կազմված և սույն պայմանագրի անբաժանելի մասը հանդիսացող՝ աշխատանքների խոշորացված նախահաշվի հիման վրա: Սույն պայմանագիրը կնքելու հետ մեկտեղ Պատվիրատուն Մատակարարին է ներկայացնում աշխատանքների խոշորացված նախահաշվի հիման վրա որոշված կանխավճարի գումարի 80%-ի վճարումը հավաստող փաստաթուղթը:

5. Կանխավճարի չափը, Պատվիրատուի նոր գազասպառման համակարգը գազամատակարարման ցանցին միացնելու համար անհրաժեշտ աշխատանքների ավարտից 3 աշխատանքային օրվա ընթացքում, ենթակա է ճշգրտման՝ ելնելով Պատվիրատուի նոր գազասպառման համակարգը գազամատակարարման ցանցին միացնելու համար անհրաժեշտ փաստացի կատարված աշխատանքների արժեքից: Եթե ճշգրտված կանխավճարի չափը տարբերվում է խոշորացված նախահաշվով որոշված կանխավճարի չափից, Կողմերը պարտավոր են 3 աշխատանքային օրվա ընթացքում կատարել փոխադարձ հաշվարկներ:

6. Պատվիրատուի կողմից վճարված կանխավճարը մարվում է բացառապես ԳՄՕԿ-ով սահմանված կարգով:

7. Բազմաբնակարան շենքերի կամ առանձին թաղամասերի կառուցապատողների կողմից կատարված կանխավճարը հավասարաչափ բաշխվում է միացման կետերի միջև և ձևակերպվում յուրաքանչյուր միացման կետի համար գազամատակարարման Պայմանագիր կնքած անձի հաշվին՝ ԳՄՕԿ-ով սահմանված կարգով:

4. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

8. Սույն պայմանագրով սահմանված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Կողմերը պատասխանատվություն են կրում Հայաստանի Հանրապետության օրենքներով, ԳՄՕԿ-ով և սույն պայմանագրով սահմանված կարգով:

9. Սույն պայմանագրի 2-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված ժամկետի խախտման դեպքում Մատակարարը Պատվիրատուին վճարում է տույժ՝ օրական սույն պայմանագրի 4-րդ կետում նշված կանխավճարի 0.15 տոկոսի չափով, բայց ոչ ավելի, քան կանխավճարը:

10. Սույն պայմանագրի 2-րդ կետի 3-րդ ենթակետի խախտման դեպքում Պատվիրատուն Մատակարարին վճարում է տույժ՝ օրական սույն պայմանագրի 4-րդ կետում նշված կանխավճարի 0.15 տոկոսի չափով, բայց ոչ ավելի, քան կանխավճարը:

5. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ ՄԱԺՈՐ)

11. Կողմերը սույն պայմանագրով սահմանված պարտավորությունների խախտման համար պատասխանատվություն չեն կրում, եթե այն հետևանք է ֆորս մաժորի: Սույն պայմանագրի իմաստով ֆորս մաժոր են համարվում արտակարգ և անկանխելի այն դեպքերն ու հանգամանքները, որոնք առաջացել են կողմերի կամքից անկախ և միևնույն ժամանակ, անկախ վերջիններիս գործադրած ջանքերից, խոչընդոտել են պարտավորությունների կատարմանն ուղղված կողմերի գործողություններին: Սույն պայմանագրի իմաստով արտակարգ և անկանխելի դեպքեր և հանգամանքներ են բնական և տեխնածին աղետները, բնության ուժերի արտասովոր դրսևորումները (այդ թվում՝ ջրհեղեղներ, երկրաշարժեր, փոթորիկներ, պտտահողմեր, կայծակով

և ամպրոպով ուղղորդվող հորդառատ անձրևներ, ձնաբքեր, սողանքներ), գործադուլները, հասարակական անկարգությունները, ահաբեկչությունները, պատերազմները, ապստամբությունները: Սույն կետը չի սահմանափակում կողմերի իրավունքը՝ նկարագրվածից բացի այլ արտակարգ և անկանխելի դեպքեր և հանգամանքներ ի հայտ գալու պարագայում դիմել Հանձնաժողով՝ դրանք ֆորս մաժոր ճանաչելու համար:

12. Կողմերը պարտավոր են վերոհիշյալ իրավիճակների մասին անհապաղ տեղեկացնել միմյանց՝ նշելով դրանց հետևանքների վերացման հնարավոր ժամկետները:

6. ԼՐԱՑՈՒՑԻՉ ՊԱՅՄԱՆՆԵՐ

13. Մատակարարն ազատվում է սույն պայմանագրի 4-րդ գլխով սահմանված պատասխանատվությունից, եթե պարտավորությունները չկատարելը պայմանավորված է պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների, կամ այլ անձանց կողմից Մատակարարին իրավունքների, թույլտվությունների, եզրակացությունների կամ այլ փաստաթղթերի տրամադրմամբ, որոնց արդյունքում անհնար է դարձել գազասպառման համակարգի՝ սույն պայմանագրում սահմանված ժամկետում գազամատակարարման ցանցին միացումը: Նման հանգամանքեր ի հայտ գալու դեպքում Մատակարարը պարտավոր է հնարավորինս սեղմ ժամկետում տեղյակ պահել պատվիրատուին և ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցներն իր պարտավորությունների հետագա պատշաճ կատարումը ողջամիտ ժամկետներում ապահովելու նպատակով:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ (լրացնում են Կողմերը)

14. Սույն գլխում Կողմերի սահմանած այլ պայմանները չեն կարող հակասել սույն պայմանագրին, ԳՄՕԿ-ին և այլ իրավական ակտերին:

_____

_____

8. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՈՒՄԸ

15. Սույն պայմանագրի առնչությամբ Կողմերի միջև ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով, իսկ Կողմերից մեկի գրավոր դիմումի դեպքում՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի միջնորդությամբ: Սույն կետը չի սահմանափակում Կողմերի իրավունքը՝ վեճերը լուծելու դատական կարգով:

9. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ, ՓՈՓՈԽՄԱՆ ԵՎ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

16. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կնքման պահից և գործում է մինչև սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման ավարտը:

17. Սույն պայմանագիրը կազմված է երկու օրինակից, մեկական՝ յուրաքանչյուր կողմի համար:

18. Սույն պայմանագիրը կարող է փոփոխվել կամ լուծվել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով:

10. ԿՈՂՄԵՐԻ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ ԵՎ ՏՎՅԱԼՆԵՐԸ

Մատակարար՝

Գտնվելու վայրը ՀՀ, ք. Երևան, Թբիլիսյան 43
Հեռախոս 010 294728
Ֆաքս 010 294728
էլ. փոստ inbox@gazprom-armenia.am
ՀՎՀՀ 00046317
Հ/հ 24701005279041000
Բանկ «Արդշինբանկ» ՓԲԸ
Գործունեության լիցենզիա N13519.04
Ղեկավար
Ավետ Հակոբյան
(ստորագրություն, անուն, ազգանուն)

Պատվիրատու՝

Բնակության վայրը
Ծանուցման հասցեն ՀՀ, ք.Երևան, Կորյուն 15/1
Անձնագիր
Գտնվելու վայրը ք.Երևան, Գ.Բաշինջաղյան փող, թիվ 100
Հեռախոս
Ֆաքս
էլ.
ՀՎՀՀ 02583241
Հ/հ 900011192151
Բանկ ՀՀ Ֆինանսների նախարարություն, գործառն. Վարչություն
Ղեկավար (ֆիզիկական անձ), ղեկավարի պաշտոնակատար
Նաիրի Գայստյան
(ստորագրություն, անուն, ազգանուն)